ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՔՐԻՍՏԻՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Վարդանյան,

ի պատասխան Ձեր 19.11.2025թ. գրության՝ տեղեկացվում է, որ Կենտրոն վարչական շրջանի Տիգրան Մեծի պողոտայի սկզբնամասում «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կողմից ծառահատման տոմսերի հաստատումից հետո հատվել են կենսունակության ավարտին մոտ գտնվող, փտած, սաղարթազուրկ, վթարային 3 բարդի, 1 ծիրանենի և 5 հացենի՝ համաձայն Երևան քաղաքի ավագանու 18. 11. 2009թ. թիվ 36 որոշման 4-րդ գլխի, 12-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերի:

Տեղեկացվում է, որ ելնելով ստեղծված իրավիճակից, տարածքում հատված ծառերի բնաբաժակներում, ինչպես նաև նոր բացված բնաբաժակներում տնկվել են արժեքավոր արևելյան սոսիներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ